

**ԵՐԵՔ ԵՂՎԱՅՐՆԵՐԻ ԿԱՄ ԱՐԵՒՆԵՐԻ
ԴԻՑԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՅ ԵՒ ՕՏԱՐ
ԲԱՆԱՒՈՐ ՄՇԱԿՈՅԹՈՒՄ**

ԳԱԳԻԿ ՄԱՐՏՈՅԵԱՆ

Հայ միջնադարեան եկեղեցական-մեկնական գրականութիւնից մեզ է շատիւ Պատմութիւն վասն Մանկանն Սւ Աղջկանն» կամ «Հարցմունք Աղջկան Ընդ Մանկանն» անուններով յայտնի մի գրոյց¹, որի ԺՁ-ԺԹ դարերի գրութեանը վերագրուող 38 ընդօրինակութիւն պահուած է Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարանում: Եստ ալ օրինակներ դառնում են արտասահմանում եւ մասնաւոր հաւաքածուներում:

Հայ գեղարուեստական արձակի հնագոյն նմուշների շարքին պատկանող այս երկում ալլաբանօրէն շարադրուած է հերոսի Մանկան երկրաշին հարստութիւնից հրաժարուելու, հանդերձեալ աշխարհում (զբախտում) մեծ հարստութեան արժանանալու պատմութիւնը²: Պատմութեան հերոսը՝ Մանուկը ձիու վրայ քնելով, յայտնուած է իր հորի մօտ: Իր քաւկով ջուր է խմում: Համարում է, որ իր մահն է խմել եւ յայտնուած է հանդերձեալ աշխարհում: Այստեղ հիւրընկալուած է մի պառաւի տանը՝ Նրանից խմանում է, որ երկրի արքայազուստը (Աղջկը) ցանկանում է ամուսնանալ եւ այդ նպատակով հարցեր է ուղղում փեսացուներին: Հարցերը զերակչուող մասով աստուածաբանական են, բայց քանի որ փեսացուները չեն կարողանում գտնել դրանց պատասխանները, ուստի Աղջկայ հրամանով գլխատուած են: Մանուկը դնում է արջունիք, պատասխանում է Աղջկայ բոլոր հարցերին եւ նրա հետ ամուսնանալով, երկնային արքայութեան արժանանում:

Հայ բանագիտութիւնն այս ստեղծագործութիւնը երբեւէ չի դիտարկել առասպելաբանական տեսանկիւնից եւ քննութեան չի առել դրա ալլաբանական պատկերների հարուստ համակարգը, որը վերախմայտաւորման է ենթարկուել քրիստոնէական պրիսմակի միջոցով՝ Արեւի եւ Լուսնի վերաբերեալ վաղնջական դարերից եկող դիցաբանական հաւատալիքների հիման վրայ:

Ձրոյցում Մանուկն ակնյայտօրէն արեւային խորհրդանիշներով է նկարագրուած, Աղջկը՝ լուսնային: Մանուկն աշխարհ է գալիս իրրեւ եզրուակ մի գեղեցիկ՝ արեգական նման³: Հասակ առնելով, իրեն ծնուած է համարում «Երոյ» համաստեղութիւնում, որը հնում դիտուել է իրրեւ դարեանային տարեկիրը, ուր ծնուել եւ զօրացել է Արեգակը:

Աղջիկն իրեն կոչում է «Դայել» (չայնակ), որն է՝ դարի Հայ գիտնական Անանիա Շիրակացու մատենագրութեան մէջ անձրեւների առաջացնող եւ բուրաստաններ սնող Լուսնի անուանումն է՝, իսկ Հայկական միջնադարեան նշանագրերի աղիւսակում տեղաւորուած է խոնարութիւն, ամպրոպ եւ անձրեւ արտայայտող խորհրդանիշների սիւնակում⁸։ Զրոյցի մի տարրերակում Աղջիկն իր նափշտների հետ այցելում է Մանկանը, իսկ նափշտները վերջինիս սենեակին Հասնելով, ձայնում են. «Զինչ, որ լուսին արեգական սիրոյ տէր է, այնպէս եւ մեք անպատճառ կամխք տեսնել զքեզ»։

Ծաւօք, մէկ յողումն շրջանակները թոյլ չեն տալիս աւելին Հաղորդել զրոյցի խորհրդանիշների այլարանական չափազանց ուշազրու Հայեցակարգի մասին, որի խմաստարանական զուգահեռները լայնօրէն տեղ են գտել ո՛չ միայն Հայ միջնադարեան եկեղեցական-մեկնական գրականութեան մի շարք նմուշների, այլեւ միմեանց հետ պատմական սերտ շփումների մէջ եղած տարբեր ժողովուրդների ստեղծագործութիւններում։ Այս ամէնի Հանգամանալից շարադրանքը աւարտուն տեսքի ենք բերել մեր «Մանուկ Արեւը Եւ Նրա Քրիստոնէական Կրկնորդը» անտիպ մենագրութեան մէջ։ Այստեղ սակայն Հարկ ենք Համարում բաւականանալ միայն ասելով, որ զրոյցում արդար եւ առաջինի քրիստոնէայի կերպարը մարմնաւորող Մանուկը՝ քրիստոնէական քարոզիչների միջամտութեամբ, Համարուել է ամէն ինչի արդար գատաւոր եւ մարդկային առաջինի կենսակերպը Հսկող Մանուկ Արեւի մասին ժողովրդական զանգուածներում գոյութիւն ունեցած հին, նախաքրիստոնէական ըմբռումներին։

Մանուկը եւ Աղջիկը դիցաբանական Արեւ եւ Լուսին Հերոսներն են, որոնց երկնային ամուսնութեան մասին պատմող առասպելալիքը թագնուած է Օձ Մանուկին վերաբերող Հայկական ժողովրդական Հեքիաթաւարում⁹։

Միեւնոյն ժամանակ այս ստեղծագործութեան մէջ բացառիկ Հարազատութեամբ կրկնուած ենք տեսնում աշխարհի տարբեր ժողովուրդների, այդ թւում՝ Հայերի բանահիւսութիւնից յայտնի երեք եղբայրների մասին պատմող Հեքիաթների նախադրութեան կաղապարը, ըստ որի, թագաւորի երեք զաւակները ճանապարհուած են կորած արքայադուստրերին փնտռելու (ամուսնութեան ձգտում), կուրացած հօր աչքերի դեղը գտնելու կամ ուղղակի բախտ որոնելու նպատակով։ Աւագ եղբայրները կրտսերին իջեցնում են հորը կամ ջրհորը, եւ նա յայտնուած է Հանդերձեայ Մութ աշխարհում։ Այստեղ նա սպանում է երեք դուերի (վիշապների) եւ ազատում նրանց առեւանգած աղջիկներին։ Աւագ եղբայրները՝ կրտսերի յաջողութեանը նախանձելով, նրան դաւաճանաբար թողնում են հորում։ Մութ աշխարհում, կրտսերը հիւրընկալուած է մի պառաւի տանը, նրանից

Ղուր է խնդրում ծարաւը յագեցնելու համար, սակայն պառաւը յայտնում է, որ քաղաքի ջրի ակը փակել է սոսկալի վիշապը եւ Ղուր է բաց թողնում միայն մարդկային զոհեր (աղջիկներ) ստանալուց յետոյ Կրտսեր եղբայրը գնում, յաղթում է վիշապին այնպէս, ինչպէս գրուցի Մանուկը՝ Աղջկան։

Միւս էի շարունակութեան մէջ կրտսեր եղբայրը ազատում է վիշապի մօտ գոհարեութեան ուղարկուած արքայազատերը, իսկ արքան Հերոսին խորհուրդ է տալիս Մուկ Աշխարհից Լոյս Աշխարհ դուրս գալու համար դիմել անտառում ապրող հաւքի (արծուի, Զմուռու կամ Մոզինար դուշի) օգնութեանը, որն ամէն անգամ զանգաւտում է, թէ իր ձագերին սպանում են, բայց չգիտէ, թէ՛ մ'ի Հերոսը պահակ է կանգնում թռչնի բնին եւ տեսնում, որ մի վիշապ է գալիս, փաթաթում ծառին ու սկսում բարձրանալ։ Հերոսը կտոր-կտոր է անում վիշապին եւ կտորները լցնում բնի մէջ՝ ձագերին կերակուր ինքը պառկում է ծառի տակ եւ քնում։ Գալիս է հաւքը եւ տղային տեսնելով, կարծում է, թէ նա է իր ձագերին սպանողը։ Ուզում է ծուէն-ծուէն անել, բայց ձագերը չեն թողնում, թռչունը՝ հասկանալով, որ քնած Հերոսն իր բարերարն է, թեւերով հովանի է անում նրան, իսկ երբ վերջինս արթնանում է, նրան հանում է Լոյս Աշխարհ։ Հերոսն ամուսնանում է դեւերից իր ազատած աղջիկներից կրտսերի հետ՝

Հալկական նմանատիպ հեքիաթներից, որոնց թիւը մի քանի տասնեակից աւելի է, կարելի է յիշատակել յատկապէս «Անմահական խնձոր»³⁰, «Ուսկէ Խոնձորնուն Նաղըրը»³¹, «Հազարան Բլբուլ կամ Այո-Դինոյի Նաղըրը»³², «Ղուշ-Փարին»³³, «Ածղահակը»³⁴ եւն.։

Երեք եղբայրների մասին հեքիաթային համանման մոտիւների առասպելականութիւնը վաղուց նկատելի է Հայագիտութեան մեծ երախտաւոր Մանուկ Աբեղիանը եւ կուհեյ, որ դրանք յայտնի են եղել նաեւ Ս. դարում ապրած պատմաւագր Մոզսէս Խորենացուն, որն այդ մասին ազատ յիշատակում է Արծրունեաց տոհմի նախնու եւ «Արծրունի» անուան բացատրութեան կապակցութեամբ։ «Թողում զառասպելեացն բաժնադանս, որ ՚ի Հազամակերտին պատմին. մանկան (ընդծումն իմն է - Գ.Մ.) նիրհելոյ անձրեւ եւ արեւ հակառակեալ, եւ հովանի թռչնոյ պատանուին թալկեցելոթ»³⁵։ Աբեղիանն այս առիթով գրել է. «Մի անգամ, որ այս հեքիաթի առաջին մասը, Մուկ աշխարհքում ջրի առաջը կտրող վիշապին սպանելը, Մանասարի մասին պատմուած առասպելն է, պէտք է կարծել, որ Մանասարին է վերաբերել նաեւ դրա բնական շարունակութիւնը, Զմուռու հաւքի (արծուի) ձագերն ուտող վիշապին սպանելն եւ Մուկ աշխարհից Լոյս աշխարհ ելնելը։ Ճիշտ է, վէպի (այսինքն՝ Մանայ Մուր հպոսի - Գ.Մ.) մէջ պատմուած չկայ հեքիաթի այս մասը... Բայց ... Խորենացին լիջում է վերելի առասպելի մի կտորը, թէ յոգնած ու քնած տղայի, որ է Մանասարի վրայ արծիւը հովանի է արել։ Հնումն անպայման ամբողջ առասպելն, ինչ

որ վէպի եւ Հեքիաթի մէջ կայ, պատմուած է եղի Սանասարի կամ իր եղբոր մասին: Բայց պատմագիրն արճամարհելով այդ առասպելը, դրա մի մտտին է միայն մէջ բերում եւ արդէլ միայն նրա համար, որ յայտնի թէ Արծրունիներն իրենց անունը ծագած են համարում իրենց նախնուն Հովանի անող արծուից¹⁶:

Յետագայ ժամանակներն ազացուցեցին Արեղեանի կուսման արդարացիութիւնը: 1870ականներին զրի առնուեց Հայկական էպոսի մի նոր պատում, որը լրացնում էր առասպելի բաց թողնուած մասը եւ նոյնութեամբ կրկնում երեք եղբայրների Հեքիաթների մտտիները: Ահա այդ դրուագները:

Սանասարն ու նրա եղբայր Բաղդասարը Քառսուռն Ճող Մամի քաղաքում կուսում են փառչեաւանների դէմ եւ յաղթում: Աղջկայ առաջարկով, Սանասարը ծովից Հրեղէն ձի է հանում, գնում Օձ Քաղաք եւ սպանում թեւատր վիշապին, որն արեւի երեսը բռնել էր: Քաղաքի թագաւորը կամենում է պարգեւատրել վիշապին սպանողին, բայց Սանասարը դրան չի սպասում: Նա դալիս է Պառաւի տուն, որն իրեն հիւրընկալել էր քաղաք մտնելիս: Ջուր է ուզում նրանից, բայց պարզում է, որ քաղաքում ջուր չկայ: Վիշապը փակել է աղբիւրի ակը եւ ջուր է բաց թողնում, երբ աղջիկ են զոհարեցում: Հերթը հասած է յինում թագաւորի աղջկան: Սանասարը նրա Հեռ գնում, սպանում է վիշապին: Թագաւորն՝ այդ մասին իմանալով, կամենում է զաւր ժառանգել վիշապասպան Հերոսին, բայց Սանասարը դրա փոխարէն խնդրում է իրեն դուրս բերել նրա աշխարհից եւ իր երկիրն ուղարկել: Թագաւորը դա իր ուժերից վեր է համարում եւ խորհուրդ է տալիս դնալ անտառ եւ փրկել արծուի ձագերին, որոնց ամէն անգամ խճուում է վիշապը: Եթէ նա սպանի վիշապին՝ արծուից օգնութիւն կը ստանայ: Սանասարը գնում է անտառ եւ ծառի տակ պռուկած, սպասում է: Վիշապը դալիս, փաթաթում է այն ծառին, որի կտտարին արծուի բռնն է: Սանասարը թրատում է վիշապին եւ կտորները գցում ձագերին՝ որպէս կերակուր: Ինչը պռուկում է ծառի տակ ու քնում: Արծիւք գալիս, տեսնում է Սանասարին, կարծում է, թէ նա է իր ձագերին սպանողը: Բարձրանում է երկինք, որ այնտեղից իջնի ու իր թշնամու վերջը տայ, ձագերը ձայն են տալիս, թէ նա է իրենց ազատարարը: Արծիւն իջնում, տեսնում է վիշապի կտորներն ու թեւերը բացում, հով է անում որ Սանասարը քնի: Այնուհետեւ արծիւք Լույս Աշխարհ է հանում իր բարեբարին¹⁷:

Մեզ յայտնի չէ՝ գիտահետազոտական որեւէ ուսումնասիրութիւն, որը հանդերձեալ աշխարհ՝ ստորերկրայք մտնող (այսինքն՝ մեռնող) եւ այնտեղից վերադարձող (այսինքն՝ վերածննտող) Հերոսի մասին պատմուած այս սխեմէի մտտիներն ուղղակիօրէն կապէր վաղ ժամանակներից եկող արեւային առասպելաբանութեան Հեռ: Մինչդեռ Արեւի լծաճուանձ

մասին գոյութիւն ունեցած Հաւատալիքները վկայուած են աշխարհի շատ ժողովուրդներին, այդ թւում՝ Հայերի աւանդութիւններին:

Հիւսիսամերիկեան Algonkin ցեղի Հնդկացիներն օրինակ, Արեւը պատկերացնում էին, իբրև Հրաշալի, կարմիր կարապ, որից Հզոր լոյս է ճաճանդում: Մի անգամ այգարացին, լծի մօտ, որսորդը տեսել էր այդ Հրացույքը եւ նետահարել նրան: Վիրաւոր կարապն ուղղութիւն էր վերցրել դէպի արեւմուտք եւ անհետացել արեակարմիր Հորիզոնում: Բիրմալի Karen ցեղի ծէսերում դիմում էին զոհաբերուող թռչուններին եւ ասում. «Դու կ'ուղևորուես ստորգետնեայ երկրներ, ուր Արեւն է թափառում... Ես քեզ իմ սուրհանդակն եմ դարձնում»:

Նրանք Հաւատում էին, որ երբ Արեւը երկրի վրայ մայր է մտնում, ծագում է Հանդերձեայ աշխարհում, իսկ երբ մայր է մտնում Հանդերձեայ աշխարհում, ծագում է երկրի վրայ³⁰:

Հայկական մի Հանելուկում մեռնող-յառնող է ոչ միայն Արեւը, այլևեւ Լուսինը. «Քոյր եւ եղբայր են. մինն առաւօտն է ծնւում, երեկոյեան՝ մեռնում, միւսը՝ երեկոյեան ծնւում՝ առաւօտը՝ մեռնում»: Պատասխանը՝ «Արեւ, Լուսին»³¹: Ներսէս Ենտրալու մի Հանելուկում Արեւը ծնուելիս եւ մեռնելիս, միևնույն Մանուկն է. «Տեսի զմանուկ մի, որ ծնանէր, եւ նոյն օրն մեռանէր, յետ թաղելոյն դարձեայ յառնէր, ի ալլ գեղեցիկ գինք ցուցանէր»³²:

Հանդերձեայ աշխարհ ընկած (յաճախ՝ ջրհորի միջով) երրորդ Հերոսի կերպարը մեծ տարածում է ունեցել բազմաթիւ ժողովուրդների դիցաբանութեան եւ բանահիւսութեան մէջ: Երրորդ Հերոս է Համարւում նաև Հնդարիական Տրիտան (Հնդերոպական նախալիզուի ՄՈՒ-«Երեք» կամ Հին Հնդկերէն՝ त्रिधा-«Երրորդ» արմատներէց), որը *Ռիքթիքայում* նստած է ջրհորի մէջ եւ նայում է գիշերային երկնքին: Ռուս անուանի բանագէտ Վլադիմիր Տոպորովը նրա իրանական Համարժէքն է Համարել վիշապապան Տրալտանային, ինչպէս նաև Հայկական Վահագնին³³: Վերջինիս արեւային ընդլի մասին տեղեկութիւն է պահպանուել Հայկական միջնադարեան «Տօնական Մատեան» ձեռագրում: Անանուն Հեղինակը լիչի է-«Ռմանք դարեզակն պաշտեցին եւ Վահագն կոչեցին եւ այլք՝ զլուսին եւ Արտեմիս ձայնեցին»: Ա. դարի յոյն փիլիսոփայ Փիլոն Երբայեցու «Վասն տասնարանեան օրինաց» գրութեան Հայերէն թարգմանութեան մէջ ասուած է. «Քանզի կոչեն ոմանք... զհուր Հեփեստոսն եւ արեգական զՎահագն»³⁴: Վահագնը փոխարինում է ընագրի «Ապոլոն» անուանը, որը նոյն թարգմանութեամբ Հանդիպում է Հին Հայկական այլ ձեռագրերում եւս³⁵: Տոպորովը Տրիտային (Վահագնին) Համեմատել է նաև ուուսական Հեքիաթներին երրորդ եղբոր Հետ, չկենտրոնանալով օտակայն, նրան վերագրուած անունների արեւային յատկանիշներին վրայ: Ուշագրաւ է, որ այդ

կորորը յաճախ կոչում են «Իւան Տրետէյ» (Իւան Երրորդ), «Իւան Վոդովիչ» (Իւան Ջորորչի)²⁴, ինչը ոչ միայն համահունչ է Ռիզվեզայի Հերոսի՝ Տրետայի անուանը, այլև յուշում է Ղրի Հետ նրա ունեցած կապը Հարկ է վիշտակել, որ Տոպորովին յայտնի Հեքիաթներում էլ աւագ եղբայրների ձեռքով դաւանանարար ստորերկրայք ընկած կրտսերը, ինչպէս Հայկական էպոսում եւ Հեքիաթներում, Լոյս Աշխարհ դուրս գալու հնարաւորութիւն է ստանում միայն այն ժամանակ, երբ փրկում է ծառի վրայ բուն դրած թռչնի ձագերին:

Առաւել հետաքրքիր են ուսուսական երրորդ Հերոսի այն անունները, որոնք ցերեկային կամ գիշերային Արեւը (Լուսինը) եւ նրա լոյսն են խորհրդանշում. Ivan Utrennoi Zari (Այգարացի Իւան), Ivan Polunochnoi Zari (Կիսամութի Այգի Իւան), Svetovik (Լուսատու), Svetozor (Լուսահայտաց), Vechernik (Իրիկունիկ), Polunochnik (Կէսգիշերիկ)²⁵.

Այնքանզր Աֆանասեի գրառած ուսուսական «Ջորիկան, Վելորիկան եւ Պորունովկան» Հեքիաթում էլ երեք եղբայրների անուններն առնչւում են ցերեկային եւ գիշերային Արեւներին²⁶. Ջորիկան Այգարացն է, Վելորիկան՝ Իրիկունիկը, Պորունովկան՝ Կէսգիշերիկը: Նրանք էլ ճանապարհւում են առեւանդուած աղջիկներին գտնելու եւ խորխորատի միջով ընկնում են հանգերձեալ աշխարհ, որտեղ սպանում են բազմազլուխ վիշապների եւ ազատում աղջիկներին:

Վրացական «Իւան Ջարիան» (Արշալոյսի Իւան) Հեքիաթում²⁷, որը գոնէ անուանապէս փոխառուած պէտք է համարել ուսուսական բանահիւսութիւնից, ակնյայտօրէն երեւում է, որ երեք եղբայրները երկնային երկու լուսատուների՝ ցերեկային Արեւի եւ գիշերային Լուսնի ետակի մարմնաւորումն են: Հեքիաթի բովանդակութիւնը հետեւեալն է.

Մի քաղաքում անդաւակ դարբին էր ապրում եւ շատ էր ուզում երեխաներ ունենալ: Նրա կինը մի անգամ գետից երեք խնձոր բռնեց: Մէկը տուեց ամուսնուն, երկրորդն ինքը կերաւ, իսկ երրորդը Հաւասար կիսեց իր եւ ամուսնու միջեւ: Կինը ծանրացաւ եւ ինն ամիս անց, երկունքի ցաւերով բռնուեց: Կանչեց տատօրրը Յանկարծ կնոջ որովայնից ճիչ լսուեց.

- Պատրաստուէ՞ք կնքել ինձ, թէ չէ՞ կը թռչեմ երկինք, չէ՞ք հասցնի Երեկոյան տղայ ծնուեց, որին կնքեցին եւ անուանեցին Իւան Վելորիկ (Իրիկունայ Իւան): Նա կերաւ մօր կաթը եւ թուաւ երկինք:

Հենց տատմայրը պատրաստուած էր հեռանալ, նորից ճիչ լսուեց.

- Բաց մի թողէ՞ք նրան, հիմա աշխարհ կը դամ եւ կը թռչեմ...:

Կէսգիշերին ծնուեց երկրորդ որդին, որին կնքեցին եւ անուանեցին Իւան Պորունովի (Կէսգիշերուայ Իւան): Սա էլ մօր կաթը կերաւ եւ թուաւ երկինք:

Այգարացին ծնունց երրորդ որդին, որին անուանեցին Իւան Զարիա (Արշալոյսի Իւան): Սա էլ ժօր կաթը կերու եւ թուա երկինք:

Այդպէս էլ երեք եղբայրներն ապրում էին երկնքում՝ թռչելով աստղերի ու ամպերի միջով: Օրը մէկ անգամ գալիս էին ժօր կաթն ուտելու՝ խրաքանչիւրն իր ժամին՝ Իրիկուայ Իւանը՝ երեկոյեան, Կէսգիշերուայ Իւանը՝ կէսգիշերին, Արշալոյսի Իւանը՝ արշալոյսին: Նրանք այդպէս էլ ոչ մի անգամ չտեսան իրար:

Քաղաքում ապրում էին թագաւորի երեք գեղեցկուհի դուստրերը, որոնք մշտապէս տանն էին նստած եւ արեւի երես չէին տեսնում: Հայրը մի անգամ ասաց նրանց.

- Գնացէ՛ք արեւի երես տեսէ՛ք:

Հենց նրանք դուրս էին եկել, ամպեր հաւաքուեցին, երկինքը մթնեց եւ ամպրոպ ճայթեց: Յայտնուեց վիթխարի դեւը եւ փախցրեց աղջիկներին: Նրանց փրկելու գնացին երեք եղբայրները: Նրանք հասան լեռան ստորոտին, որի ընդերքում քնած էր երկաթէ՛ դեւը: Արշալոյսի Իւանն արթնացրեց նրան եւ խնդրեց, որ օգնի բարձրանալ լեռն ի վեր: Պատրաստեցին երկաթէ՛ շղթայ եւ վեր նետեցին: Արշալոյսի Իւանը շղթայի վրայով հասաւ լեռան կատարին: Այտեղ՝ պղնձէ, արծաթէ եւ ոսկէ տներում հանդիպեց երեք աղջիկներին, սպանեց նրանց պահապան դեւերին եւ ջրյութին իջեցրեց լեռն ի վար: Երբ ինքն էր պատրաստուում իջնել, երկաթէ՛ դեւը կտրեց շղթան, իսկ Արշալոյսի Իւանի եղբայրները չխանգարեցին նրան: Արշալոյսի Իւանը լեռան վրայ օդում թռչող մի զօրաւոր նժույզ յայտնարեց եւ նրան հեծած, հասաւ թագաւորի քաղաքը: Հաշուեյարդար տեսաւ երկաթէ՛ դեւի եւ իր աւազ եղբայրների հետ: Ամուսնացաւ թագաւորի կրտսեր դստեր հետ եւ ժառանգեց արքայական գահը:

Ինչպէս պարզ երևում է, այս հեքիաթում եղբայրներից մէկը Լուսինն է՝ միջինի եղբայրը՝ Կէսգիշերուայ Իւանը: Մեծ եղբայրը մայրամուտի Արեւն է, Արշալոյսի Իւանը՝ լուսածագի Դարձեալ առկայ է կրտսեր եղբորը նախանձելու մոտիւր: Ճիշտ է, բացակայում է հերոսի՝ հորը կամ ջրհորն ընկնելու միջադէպը եւ դրա փոխարէն երեսան է գալիս լեռան դրուազը, սակայն դա չի բացառում այն, որ երրորդ եղբայրը հանդերձեալ աշխարհ է ընկել:

Առը նոյնպէս ընդհանուր առասպելաբանութեան մէջ ընկալում է իբրեւ հանդերձեալ աշխարհ տանող ճանապարհ: Եումէրական Գիլգամէշէ պոսում Գիլգամէշն անմահութիւն գտնելու փափաքով անցնում է Սաշու լեռների միջով, ըորոնց կուրճը ներքեւում սանդարամտին է հասնում²⁸: Եումէրերէնում Վիւրը բառը սկզբնապէս համատեղուել է Վիւնձ եւ «հանդերձեալ աշխարհ» հասկացութիւնների հետ եւ յետոյ միայն գործածուել ռօտար երկիրը նշանակութեամբ²⁹: Զրադաշտական հաւատալը

ներում, հանդերձեալ աշխարհ տանող կամուրջը ձգւում էր Հարատի լեռան կատարից մինչեւ երկնքի խորքերը՝ Յունահունդական Ամուրի եւ Փսիխէաչի առասպելում Փսիխէաչին հանդերձեալ աշխարհ են ճանապարհում բարձր ժայռի կատարից՝

Հայկական Այօ-Դինոյի Հեքիաթը նոյնպէս, ի դէմս երրորդ Հերոսի, պահպանել է յուշն Արեւի մասին, եւ դա ասում է Հեքիաթասացը՝ դուերի բերանով: Դուերը երեքն են: Հերթով դալիս, տեսնում են իրենց տուն մտած Հերոսին, որի հետ պէտք է մենամարտեն: Նրանց առաջին խօսքն է: «Բարով ես էկել, Այօ-Դինօ»: Հերոսը հարցնում է: «Դու ի՞նչ գիտես, որ ես Այօ-Դինօն եմ»: Դուը պատասխանում է: «Ես, որ սարերովը մահ ի դալիս, էն վախը ծառերը, քարերը, խտերը ձէն տուին, թէ: Այօ-Դինօն մօրիցն էլաւ: Թէ որ դու Այօ-Դինօն չըլնես՝ մեր տունն իմ ա՛խըը մարթ կարալ չի դարձ՝»²⁵: Թւում է՝ ի՞նչ կազ ունի այստեղ Այօ-Դինոյի մայրը, երբ Հեքիաթում ոչ մի խօսք չի ասում ո՛չ նրա, ո՛չ էլ Հերոսի ծննդեան նկարագրութեան մասին: Մինչդեռ կապն ամենաուղղակի է: Այդ Արեւն է, որ Հայկական ժողովրդական բանաւոր խօսքում երեկոյանն ոչ թէ՛ պայր է իջնում, այլ՝ բարձր է մտնում, իսկ առաւօտեան, երբեմն ասել են: «Արեւը մօր ծոցէն ելաւ»²⁶: Արեւի մայրը գուցէն կարող է Համադրուել Մայր Հողի մասին ընդհանուր առասպելաբանութեան մէջ տարածուած դիցաբանական ըմբռնմանը, այն Հողի, որի ընդերքից, ըստ Հեքիաթների տրամադրած նիւթի, առաւօտեան դուրս է դալիս արեգակը: Այդպէս էլ Հեքիաթում ամբողջ բնութիւնն ազդարարում է, թէ յուսարացին բարիցն էլաւ: Արեւն իր լոյսով է ողողել շուրջըստը, քանի որ բնութիւնը կենդանի աշխուժով է սկսում լցուել Հենց յուսարացին: Իսկ դիւրը ծառերը, քարերը եւ խտերը ձէն չեն տալիս, թէ՛ Այօ-Դինօն (Արեւը) մօրիցն էլաւ:

Նշանակում է երեք եղբայրների մասին Հայկական Հեքիաթներում էլ պէտք է հակուած լինենք տեսնել Հայոց մէջ վաղեմի ժամանակներում պաշտուած երեք եղբայր Արեւ, աստուածներին, որոնցից ասպնները Հակասութեան մէջ են յայտնուել կրտսերի հետ եւ նրան ուղարկել հանդերձեալ աշխարհ: Այստեղից կրտսերը դուրս է եկել վիրապներին (դուերին) յաղթած եւ նրանց առեւանգած աղջիկներին ազատած: Դուրս է եկել իբրեւ քաջագործ Հերոս եւ ամուսնացել աղջիկներից կրտսերի հետ:

Կրտսեր Արեւը դիտուել է իբրեւ Հանդերձեալ աշխարհ՝ ստորերկրայք մտնող եւ այնտեղից ելնող աստուած: Այսպիսի պատկերացումը միանգամայն Համապատասխանում է Գիշերամայրերի մասին Հայկական Հուստայիքին, որի Համաձայն, պառու. վճուկները՝ «Գիշերուան մէրերը» ամէն օր Հետապնդում են Արեւին՝ արշալոյսից մինչեւ մայրամուտ: Արեւը նրանցից խոյս տալով, երեկոյանն իջնում է երկրի ընդերքը, իսկ աղբարացին նորից լոյս աշխարհ դալիս՝ վերալոյսին գետնի տակ մտնող նոյն

այդ Արեւին վանեցիներն ասել են «մեռլի արեւ»²⁵, իսկ շիրակցիներն ուղղակի՝ «մեռեցի փայ արեւ»²⁶։ Ուրեմն այդ Արեւն աննշուելի է մեռելների հետ, որոնք ստորերկրացում են։ Այստեղ է իջել Հայերի Արեւը, ինչպէս՝ շումէրա-աքքադական դիցարանութեան մէջ Ութու («աքքադական Եամաշ)-Արեւն է գիշերը ճամբորդել ստորերկրեայ աշխարհում՝ մեռեալներին յոյս, ուտելիք եւ խմիչք բերել։ Նրա մակդիրն է «մեռեալների Հողիների Արեւ»²⁷։ Այս պատկերացմանն ազդուում է այաշկերացիների այն Հաւատալիքը, թէ՛ Արեւը գիշերուայ ընթացքում ստորերկրեայ աշխարհում եօթ աւերակ քաղաքների միջով անցնում է մէկ ժամում²⁸։ Մեռեալների աշխարհն իջնող, այսինքն՝ մեռնող Արեւի մասին եղած Հնագոյն պատկերացումների արձագանգը թիրեւս պէտք է տեսնել նաև մինչև մեր օրերը պահպանուած «Արեւը մեռնի» անէծքի կամ «Ապրի Արեւը» օրհնանքի մէջ։

Հայկական լեռնաշխարհի Հարեւանութեամբ ապրած շումէրները եւ աքքադացիները յայտնի դիցաբանական նիւթում նոյնպէս կարելի է ի յայտ բերել այստեղ քննուող առասպելական մոտիւների հետքերը։ Գիշգամէշ էպոսի շումէրական տարբերակում, որտեղ մասնագէտները Հակուած են աւելի շուտ հեքիաթային տարրեր տեսնել, քան հայկական (օրինակ՝ բոյր Հերոսներն իրենց կատարած սխրանքների Համար պարտական են ոչ թէ սեփական դիցազնական ուժին, այլ աստուածների կամ «կախարդական-հրաշակերտ օգնականների» օժանդակութեանը։ Ուրուկ քաղաքի գերագոյն քուրմ էնմերքարը զօրք է ժողովում Արատտա պետութեան դէմ՝ արշաւելու Համար։ Ի թիւս այլոց, արշաւանքին մասնակցում է ուրուկեան արքայական դինաստիայի չորրորդ կառավարիչ Լուզուլթանդան, որի նախնին եւ տոհմական աստուածն Ութու-Արեւն է։ Արատտայի ճանապարհին Լուզուլթանդան հիւանդանում է, իսկ Ութուն նրան ոտքի է կանգնեցնում «կենաց խոտերով» եւ «կենաց ջրերով»։

Նիւթի շարունակութեան մէջ խօսուում է ապաքինուելուց յետոյ, Զարուա (կամ Սարուա) լեռներում Լուզուլթանդայի թափառումների եւ դեգերումների մասին, այն մասին, որ նա երազում է վերադառնալ ուրուկեան զօրքերի մօտ։ Վիթիարի Անդուդ Հաւրի օգնութեամբ նա Հասնում է իր նպատակին։ Լուզուլթանդան փնտռում, գտնում է արծուի բոյնը եւ թռչնի բացակայութեան ժամանակ կերակրում նրա ձագին, ինչպէս նաև զարդարում բոյնը Այդ արարքից յուզուած Անդուդը Լուզուլթանդային արագավազութեան շնորհ է բնծալում²⁹։ Շումէրական տարբերակում նրանց երկուսի մասին ասուում է՝ «Սրկնակամարում Անդուդն է սուրում, երկրի վրայ Լուզուլթանդան է սուրում»³⁰։

Անդուդն իր ձագի հետ ապրում է կենաց Մառի ճիւղերի վրայ, աւելի ճիշտ՝ կատարին, քանի որ Մառի կենտրոնում տեղաւորուած է դիւական

որի Լիվիթը, իսկ արձանների մէջ՝ դիւական օձը⁴²։ Անզուգն առիծագլուխ է եւ շումէրական քարափորագրութեան մէջ սովորաբար պատկերւում է առիծներին կամ եղջերուներին ճանկած վիճակում։ Նա դիտւում է իբրեւ մահուան խորհրդանիշ, որին հակադրւում է Կենաց Մառը⁴³։ Եթէ այդպէս է, եթէ մահուան խորհրդանիշն է արեւային ծագում ունեցող Լուսուլքանդայի կախարդական օգնականը, որն օգնում է նրան օտար աշխարհից իր մերձաւորների (չօրքի) մօտ վերադառնալ, ուրեմն, վերջինիս հիւանդանալին էլ այլ կերպ չպէտք է հասկանալ, քան մահուան վիճակում յալածուելը, մանաւանդ, եթէ հաշուի առնենք, որ նրան այդ վիճակից դուրս բերողն էլ չկենաց խոտերն են եւ չկենաց ջրերը, որոնք դիցաբանական, Հեքիաթային մոտիւներում, սովորաբար, մեռելային են կեանքի կոչում։

Այս հանդամանքն ակամայից մի մտքի է յանդեցնում, որի համար, ցաւօք, պղբերների բացակայութեան պատճառով, առայժմ Հնարաւոր չէ ուղղակի ազատցոյցներ գտնել։ Մնում է ենթադրել միայն, որ Լուսուլքանդայի՝ Արատտայի ճանապարհից խոտորուելու եւ հիւանդանալու վաղը սկզբնապէս Հենց Հանգերձեալ աշխարհն է ընկալուելը Շումէրական առասպելի եւ մեզ Հետաքրքրող Հեքիաթային-առասպելական մոտիւների հիմնական տարբերութիւններն են արծուի թշնամի օձի (վիշապի) կերպարի բացակայութիւնը եւ այն, որ Հերոսին օտար աշխարհից արծիւը դուրս է բերում ոչ թէ իր թիւերի վրայ, այլ արագափազութեան շնորհ ընծայելով։

Բայց շումէրա-աքքադական Հաւատալիքներին ծանօթ է եղել նաեւ արծուի թիւերի վրայ ճակրող առասպելական Հերոսի կերպարը, որի մասին պատմւում է արծուի եւ օձի թշնամանքի կապակցութեամբ։ Այդ Հերոսն իտանան է, որին վերաբերող առասպելից սոսկ պատասխիններ են մեզ Հասելու Էտանան Արեւի խորհրդով օգնում է արծուին, որին Հորն էր չպրտել օձը։ Երախտապարտ թռչունն այդ արարքի դիմաց Հերոսին իր թիւերի վրայ երկինք է բարձրացնում՝ շնորհով վարձուող խոտը գտնելու համար։ Յատկանշական է, որ Գիլգամէշի ասուրական տարբերակում Գիլգամէշի կրկնակ էնկիդուն Էտանային հանդիպում է ոչ այլուր, քան Հանդերձեալ աշխարհում⁴⁴։

Դառնանք այժմ երեք եղբայրների մասին պատմող ռուսական Հեքիաթներին, որոնց Վլադիմիր Պրոպի մատնանշած մի շարք տարբերակներում երրորդ՝ կրտսեր եղբայրը կապւում է վառարանի, մրի ու մոխրի հետ։ Նա կարծես սերտանած լինի վառարանին, մշտապէս պառկած կամ նստած է դրա վրայ եւ երբեք չի բաժանւում դրանից։ Որոշ Հեքիաթներում նա նոյնիսկ գտնւում է վառարանի ներսում կամ վառարանի տակ։ Այլ Հեքիաթներում, նա վառարանից այն կողմ է նստած՝ վառարանի ետե-

ուում Նրա անուններն են Zapachnii Iskr (Վառարանի ետեւի կայծ), Ivan Zapechin (Իւանի ազգանունն է, որ դարձնալ մատնանշում է վառարանի ետեւը), Ivashko Zapechnik (Վառարանի ետեւի Իւանիկ), Ivan Zapetsin (Վառարանի ետեւի Իւան) եււ Նա միշտ մոխրի մէջ է թաւալում. դրա համար էլ Նրան անուանում են նաեւ Մոխրի Իւան (Ivan Popialov): Մոխրի վրայ նստած է մեռւմ 12 տարի, ապա երբ վեր է կենում ու թափ տալիս Իրեն, վրայից 6 փութ մոխիր է թափւում: Երբեմն նա ծնւում է վառարանից⁴¹:

Այս ամէնը ակամայից յիշեցնում են Հայկական թոնիր-վառարանները, որոնք կյոբ Արեւի տեսք ունեցող, գեանափոր հորեր են եւ իրենց մէջ վառուող կրակով էլ կարող էին զուգորդուել հորից դուրս եկող Արեւի դիպարանական ընկալմանը: Այսպիսի հորի շուրջ էին պաշտամունք մատուցում միջնադարեան Հայ արեւապաշտները, որոնց մասին Մխիթար Աւարանեցիին գրել է. «Երբաքանչիւր ամի երկու անգամ կամ աւելի՝ ամենեքեան այր եւ կին, ուստր եւ դուստր, փողովին ի գուր մի յոթ խաւարին»⁴²:

Թոնրի շուրջ սփռւած գոյ մոխրի վրա ծնկաչոք ծննդաբերում էին Հայ Հարսները, երբ համախճում եկեղեցի չէր լինում: Այտեղ էլ կատարւում էր մանկան մկրտութիւնը⁴³: Մանուկ էր նաեւ յուսարացին հորից (ստորերկրայից) դուրս եկող Արեւը: Նրանից էին օրհնութիւն եւ պաշտպանութիւն ակնկալում Հայ Հարսներն իրենց մանուկների համար, Արեւի կրակով էին կամենում զօրացնել նորածիններին: Մէկ անգամ չէ, որ այդպիսի սովորութեան ենք հանդիպում Հայկական հաւատալիքներում: Վարանդայում Արեւակ եւ Լուսին պաշտող ծերունիներն ու պառանկները շրջւում էին գէպի նոր ծագող Արեւը եւ ասում. «Աստույ ցնծուղն տւած ըրիզնակ ... իմ երեսս թո ոտանըդ տակը, դու իմ խոխէքը պահես»⁴⁴: Զաւախքում մանկաբարձը նորածինն գրկած, բարձրանում էր տանիք եւ դիմում Արեւին. «Աստուած, տղիս դամաքը բաց էրան»⁴⁵: Տատմայրերն, առհասարակ, նորածին երեխաներին օրհնելիս, ասում էին. «Մուրը բեզնակ (արեգակ), էս երեխի փայր տաս, երկնքիցը ցող ցողայ, գեանիցը պտուղ ստանայ, մենք էլ՝ մեղաւորներս, սրա շուաքումը ուտենք, կերակրուենք»⁴⁶:

Ռուսական հեքիաթների երրորդ հերոսի մրի եւ մոխրի հետ կապուած լինելը յիշեցնում է նաեւ Հայոց մէջ պաշտուած Թուխ Մանուկներին, որոնց անուան «Թուխ» բաղադրիչն ուսումնասիրողները բխեցնում են հերոսի «թխուելու», այսինքն, կրակի միջով հասունութեան հասնելու գաղափարից: Այս պարագայում Թուխ Մանուկ հերոսը դիտւում է որպէս կրակի փորձութիւնն անցած պատանի: Փորձութեան ծէսը կարող էր արտայայտուել դէմքի կամ մարմնի մասերի մրով սեւացնելու ձեւով, ինչպէս

նկատում է Աննա Աղլինեանը⁵¹։ Ուշագրաւ է, որ հայկական Հեքիաթներում էլ Հորն իջնող երրորդ եղբայրն անցնում է թէ՛ կրակի միջով, որի ալրոզ ջերմութեանը նրա աւագ եղբայրները չեն դիմանում եւ խնդրում են վեր հանել իրենց (տես օրինակ՝ «Անմահական խնձորը» Հեքիաթը⁵²)։

Հարկ ենք համարում աւելի հանգամանորէն խօսել Քուխ Մանուկների մասին, որոնց հայ բանագիտութիւնը ցարժ միակողմանորէն ներկայացնում է իբրեւ սոսկ Ամպրոպամարտիկ Հերոսի կերպարի զրխատնէական վերապրուկներ, առանց հաշուի առնելու, որ ընդհանուր առասպելաբանութեան մէջ Արեւը նոյնպէս կարող է Ամպրոպամարտիկի (վիշապամարտիկի) յատկանիշներով երեւան գալ, ինչպէս եղել է Միհրը իրանական առասպելներում⁵³։

Քուխ Մանուկները նախազրիտունէական դարերից եկած փոքր, մատուանման շինութիւններ էին՝ ուխտաՎայրեր, որոնց այցելում էին մոմ վառելու եւ աղօթք անելու համար։ Ժողովրդական հաւատալիքներում Քուխ Մանուկներին, Քուխերից, Աղէկ Մանուկներից (Մեղմէ Աղէկներից) անկէլալում էին հիւանդութիւնների բուժում եւ բերքատուութիւն⁵⁴։ Նրանց սրբավայրերում աղօթում էին, ասելով. «Աստուած ողորմի մեր նախնեաց հոգւոյն»⁵⁵։ Ժողովրդական այս ականջոյթների մէջ ակնյայտ է նոյն այն երրորդ եղբայր-Արեւ. Հերոսի կերպարը, որը կապուած է Հանդերձեալ աշխարհի հետ եւ որը հնագոյն շատ հաւատալիքներում (յատկապէս Բարեկոնում, խեթական թագաւորութիւնում եւ Եգիպտոսում) դիտուել է իբրեւ մարդկանց բարիքներ բերող, պտղաբերութիւն շնորհող աստուածութիւն⁵⁶։

Կայ նաեւ Քուխ Մանուկների արեւային՝ փայլուն, լուսաւոր յատկանիշը ցոյց տուող Սպիտակ Մանուկ տեսակը, որի մասին լիւստակել է Մեսրոպ Արք-Սմբատեանը Նոր Բայազէտի Ս. Կարապետ Եկեղեցու մօտի մատուանման սրբավայրի խաչքարերից մէկի վրայ գրուած է եղել. «Մուրք խաչս բարեխաւս մանկանն»։ Այս Սպիտակ Մանուկն իր սպիտակութեան շնորհը տարածած է եղել մատուաբ մօտ բնակուող «Բազէյի Աղոյի որդւոց վերայ... որոց զէմքն ու մազերը՝ ախթան սպիտակ, որ տեսնողն կարծի ծերացած լինին»⁵⁷։ Գալուստ Տէր-Մկրտչեանը Սեւանի աւազանում նկատել է, թէ Քուխ Մանուկ սրբավայրը սպասարկում են այլեւոս (սպիտակահեր, կարմրաղէմ) երիտասարդները⁵⁸։

Քուխ Մանուկի պաշտամունքին ինքնակամ ճորտութեան մտած մանուկների ծամերը կտրել եւ նրանց ընծայել են տաճարներին իբրեւ Ծառայ Արդ մանուկները միայն ծնողների դրամական նուէրով են ետ գնուել։

«Քուխ Մանուկ» են անուանել նաեւ առանձին անհատների մօտ (արդ թուով՝ Մար Աթոս Ս. Էջմիածնի ձեռագրատանը) պահուող ձեռագիրը ւ-

ւետարանները, որոնց մոզովուրդը հրաշագործ գորութիւն է վերագրել⁶⁰։ Դրանք կոչուել են նաեւ «կարմիր» կամ «կարմիր կող» աւետարաններ, թէպէտ, կազմուածքի դոյնով կարող են եւ կարմիր չլինել։ Թերեւս, այդպիսի սրբութիւնների շարքին պէտք է դասել նաեւ «Շուրիչկանի Աւետարան» կոչուող ձեռագիրը (Պարսկահայքի Շուրիչկան բնակատեղիի անուները), որն այժմ գտնուում է Մաշտոցի անուան Մատենադարանում։ Մնողներն իրենց արու գաւակներին շղուշ (ծառայ) են կարգել այս աւետարանին եւ մինչեւ եօթ տարեկանը մագերը չեն կտրել։ Աւանդութեան համաձայն, նրան վերագրուել է կարմիր-կանաչ զգեստներ հագած, սուսերաւոր մի գորարանակ, որը փախուստի է մատնել թշնամուն, երբ սա յարձակուել է Շուրիչկան դիւղի վրայ⁶¹։

Հայկական աւանդութիւններում յաճախ է կարմիր արեւը համադրուել կանաչ գոյնի հետ։ Հարսանեկան գովերից մէկում ասուում է․

Թագուոր Բ՛նչ բերեմ քե՛ նման,
Քիտ կանանչ արեւն քիտ նման.
Մեր վարդենիան, որ բացուէր,
Բացուէր քիտ արեւ դյու նման⁶²։

«Թագուորը» (Թագաւորը) փեսան է, որին նմանեցրել են Արեւին։

Մանուկներին օրհնում էին ասելով․ «Բարով կանաչ-կարմիրը կապենք», այսինքն, պսակենք, ապա՝ «Մաղ աշխարհի համար արեւ ու լուսին դառնաս» կամ՝ «Կանաչ ու կարմիր թագաւոր մտոս (դառնաս)», «կրնդկրմբորում կենաս»⁶³։ Այսինքն, պիտի ենթադրել, որ «կանաչն ու կարմիրը» Արեւն է կամ Լուսինը, կամ էլ Արեւն ու Լուսինը համատեղ։ Կանաչ-կարմիր թագաւոր էր ընկալուում նաեւ Արեւի երկուական կէս Լուսինը՝ արական կերպւորմամբ։ «Նոր-նոր նորաւոր, կանաչ-կարմիր թագաւոր, ծեր գացիր, տղայ է կար»⁶⁴։ Կանաչ-կարմիր բոց էր դուրս գալիս հայկական հպոսի Ջոջ Մ՛հեր-Արեւի դերեղմանից⁶⁵։ Ջոջ Մ՛հերն հպոսում ուզմական բնաւորութիւն ունի եւ դրանով կարող է աղերսուել Շուրիչկանի Աւետարանի կանաչ-կարմիր հագած զօրքին։

Մագերը, ծամերը, որոնք կտրում եւ ընծայում են Թուխ Մանուկներին կամ չեն կտրում սրբավայրերին ծառայող մանուկների գլխից, նոյնպէս Արեւի խորհրդանիշ են։ Հայկական հաւատալիքներում, արեւածագից առաջ հրեշտակներն Արեւին հրեղէն (այսինքն՝ կարմիր) զգեստներ են հագցնում։ Արեւը դուրս է գալիս լերան ետեւից, ցոյց է տալիս հրեղէն վարսերով դուլեր եւ բարձրանում երկնակամար⁶⁶։ Այալկերտցիները, երբ մանուկներին գլուխը խուզել են, գլխի վրայ կտր մաս են թողել, որ կոչուել է «կաշ» եւ դիտուել Արեւին համարժէք⁶⁷։ Ուրարտական Արեւ աստուած Շիւինին նոյնպէս կարմիր Բլուրի գօտիներից մէկի վրայ պատկերուած է

որպէս ծնկած, հարուստ վարսերով պատանի⁶⁶։ Երկար վարսեր էին պահում նաև Տարօնի Իննակնեայ վայրում պաշտուող Գիսիանէ աստծոյ քրմերը, քանի որ նրանց աստուածն էլ զխաւոր էր։ Գիսիանէին, որի իրական արեւային բնոյթի վերաբերեալ երբեւէ խօսակցութիւն չի բնթացել, բնորոշում էին ոչ միայն վարսերը, այլև մարդկանց աչքերը կուրացնելու կարողութիւնը⁶⁷։ Այդպէս, Արեւն Հայկական աւանդութիւններում մարդկանց աչքերը կուրացնում է ասեղնասուր ճառագայթներով⁶⁸։ Նոյն հրեղէն վարսերով եւ աչք կուրացնելու յատկանիշներով է բնորոշում նաև Ս. Կարապետը, որի վանքը կառուցուած էր Գիսիանէի կործանուած քաղինի տեղում։ Նա հրեղէն եւ լուսաւոր այլ է, որի վարսերից լոյս է փայլատակում եւ կուրացնում թշնամիների աչքերը⁶⁹։ Պատահական չէ, որ Նոր Բայազէտի Սպիտակ Մանուկ սրբավայրն էլ կառուցուած է Ս. Կարապետի եկեղեցու մօտ։ Մանուկների մազերին տուած նրա սպիտակութեան շնորհն էլ պէտք է իր կերպարանքի բնորոշիչը համարել, իբրև Արեւի լուսաւոր վարսերի ցուցիչ։

Ինչ վերաբերում է վառարանի վրայ պառկած ուսուսական երրորդ եղբայր Իւանին, Պրոպը նկատում է, որ նրան նուիրուած Հեքիաթներում առկայ է նաև Հանդերձեալ աշխարհ գնալու եւ վերադառնալու, մեռնելու եւ յարութիւն առնելու դադափարի արձագանգը։ Բուխտան Բուխտանովիչի մասին ուսուսական Հեքիաթում, Հերոսը պառկած է դաշտի վառարանին, իսկ վառարանը գտնուում է սիւների վրայ։ Պրոպն այս տեսարանը նոյնացնում է կախովի, բարձրադիր դերեզմանում Հանգչող Հանգուցեալի հետ, քանի որ մէկ այլ Հեքիաթում նոյնպիսի կախովի գերեզմանում թաղուած մեռեալի ծունկը կրծնելուց յետոյ զամբիկը սրղի է ունենում։ Չամբիկի Իւանին (Ivan Kabilnikov), Ուստի, եղբակալոււմ է, որ վառարանն այս, երրորդ Հերոսի ոչ միայն ծնուելու, այլև մեռնելու վայրն է։ Հեքիաթային նմանատիպ մոտիւններն արտայայտում են Հանգուցեալի դին աչքելու կամ օջախի մօտ թաղելու պատմական իրողութիւնը։ Ռուսական մէկ այլ Հեքիաթում առաւել ակնհերեւարար է ցուցադրուած այրուած Հանգուցեալի վերածնուելու վաղնջական ըմբռնումը։ Քաճանան սովորութիւն է ունենում դստեր համար ընծաներ բերելի, Մի անգամ, ճանապարհին տեսնում է, թէ ինչպէս է մոխրանում մարդկային վառուող գլուխը։ Մոխիրը ցնում է տուփի մէջ եւ տուն է բերում, որ թաղի Դուսարը հօր զրպանում Հեքիական բնծան փնտուելիս, գտնում է տուփը, բացում, լիքում է մոխիրը եւ դրանից յղիանում։ Այստեղ, ինչպէս եւ զամբիկի Հես կապուած Հեքիաթային մոտիւում, ինչպէս ճիշտ նկատում է Պրոպը, դործ ունենք մեռածի վերադարձի հետ⁷⁰։

Ըստ երևույթին, օջախի մօտ Հանգուցեալին թաղելու, ապա եւ վերածնուելու Հնագոյն Հաւատալիքին է աղերսուած նաև Հայկական այն սովոր

բոյժը, Համաձայն որի, ընկած ատամները, կտրած եղունգները թաղում էին թոնրի շուրթին⁷⁴։ Կտրած եղունգը թաղելով, ասում էին ճեղունկ, դու Ֆոս կեցի, Ադամ, դու վկայ կեցիք, որպէսզի վերջին դատաստանի օրը եղունգը գայ, իրենց գանի⁷⁵։ Վերջին դատաստանը քրիստոնէական ըմբռնումներով, անցկացուելու է բոլոր ողջերի եւ մեռածների նկատմամբ, իսկ զրադաշտական Հաւատալիքներով, որոնց աւելի մօտ է Հայկական այս սովորոյթը, վերջին դատաստանի օրը հողը վերադարձնելու է բոլոր մեռեալների ոսկորները⁷⁶։ Այստեղից կարելի է կուսել, թէ ինչու Հայկական Հեռահախարհում կատարուած պեղումների արդիւնքում բացուած դամբարանային թաղումներում Հանգուցեալները կծկուած դիրք ունեն, իսկ դուրիները չըջուած են արեւելք⁷⁷։ Հողն ընկալուել է իբրեւ մայրական գիրկ, արգանդ, իսկ արեւելքից, Հին Հաւատքի Համաձայն, վերածնունդ էր Հանդերձեայ աշխարհ մտած Արեգակը։ Հանգուցեալներից էլ ակնկալուել է նոյնպիսի վերածնուելու կարողութիւն, մանաւանդ, եթէ նրանք մօտ են գտնուում արեգակնատես թոնրին, որտեղից, իբրեւ Հանդերձեայ աշխարհից, յարութիւն է առնում Արեւը։ Դա լուսածագի տեսարանն է, իսկ լուսածագը, ինչպէս ճիշտ նկատել է Արեղեանը, Հայկական Հին Հաւատալիքները կապում էին մեռելների յարութեան հետ⁷⁸։

Ռուսական Հեքիաթների օջախի հետ կապուած երրորդ հերոսն այսպիսով, նոյնպէս Հանդերձեայ աշխարհ մտնող եւ դուրս եկող, վառուող Արեւն է, որի մասին յուշը Հեքիաթներում պահպանուել է այնքանով, որ Իւանը Վեպեճ է (iskr) անուանում, կապուելով վառարանի հնոցի հետ։ Նա նաեւ մեռնող, յարութիւն առնող մահկանացուի խորհրդանիշն է, որի ոգին մահուանից յետոյ ապրում է տան մէջ՝ իր Հարազատների շրջապատում։

Երեք եղբայրների առասպելոյթի հիմքում ընկած է եղել երեք եղբայր Արեւների զիջաբանութիւնը, որոնցից երրորդը՝ կրտսերը աւագների հետ ունեցած Հակասութեան կամ Հակամարտութեան պատճառով յայտնուել է Հանդերձեայ աշխարհում եւ այնտեղից դուրս եկել իբրեւ սխրագործ, վիշապասպան հերոս։ Հակամարտելու տրամադրութիւնն աւանդաբար գալիս է աւագ եղբայրներից, որոնք նախանձում են կրտսերի սխրանքներին եւ նրա դէմ են դուրս գալիս փառասիրութիւնից մղուած։ Մինչդեռ կրտսերը յաճախ ներողամտութիւն է ցուցաբերում։ Ճեմաւանական խնձորը՝ Հեքիաթում, օրինակ, թագաւոր Հայրն իմանալով կրտսեր որդու Հանդէպ աւագների ցուցաբերած նենգութեան մասին, դահլիճներին հրամայում է գլխատել նրանց, բայց կրտսերը չի թողնում։ Արանք ինձ մութաննաթութիւն արեցին, ես չեմ անիւ Աստուած թող նրանց բարին տայ։ Այլ Հեքիաթներում կրտսերը լուծում է իր վրէժը՝ եղբայրներին մահուան մատնելով։

Արեւի եռակի բնօրին մասին ըմբռնուածը ցայտունօրէն արտայայտուած է Հնդարիական առասպելներում: Ազնի աստուածն ակնյայտ արեւային յատկանիշներ է կրում: Երբ նա երկնքից իջնում, սուզում է ջրերի մէջ, աշխարհին գիշերն է տիրում⁷: Մնուել է ջրերում, երկնքում եւ մարդկանց մէջ, նրան անուանում են Վերեք կացարան ունեցող: Ունի երեք գոյն եւ երեք կեանք, երեք գլուխ եւ միաժամանակ՝ ոչ մէկը, երեք ուժ եւ երեք լեզու⁸, եռափեղկուած է եւ եռամիասնական: Երեք գործառնօթ ունի փեղայական Սաւետար-Արեւը, որն ընդգրկում է օդային եւ երկնային երեք տարածութիւն, շարժման մէջ է դնում երեք երկինք եւ երեք երկիր, մարդկանց պաշտպանում է երեք ուխտով⁹:

Կան հնաւանդ շատ առասպելներ, որոնք Արեւի շահր (մայրամուտը) երկնակամարում բացատրում են ցերեկային լուսատուի ուղղակի սպանութեամբ, ինչը բխում է երկիրը նրա կործանարար տապից փրկելու անհրաժեշտութիւնից: Մոնղոլական դիցարանութեան մէջ հրէշը երկրի վրայ ամէն ինչ այրելու նպատակով երեք Արեւ է աշխարհ բերում: Հերոսը՝ ստիպուած, սպանում է նրանցից երկուսին: Ամուրի գիշերակների առասպելում երկնքում միաժամանակ յայտնուած երեք Արեւները երկրի վրայ այնպիսի հեղձուցիչ մթնոլորտ են առաջացնում, որ ամէն ինչ սկսում է եռալ ու այրուել: Երկու աւելորդ Արեւներին սպանում են երկու հերոս: Սիբիրի միւս ժողովուրդների՝ ուլչերի, գոլդերի եւ օրոնչիների առասպելներում Արեւին սպանող հերոսը գործում է միայնակ¹⁰: Չինական դիցարանութեան մէջ Արեւների թիւը հասել է տասի, որոնք ուր որ է կրակի պէտք է մատնէին երկիրը: Դրանցից իննին սպանում է Նետաձիգը¹¹:

Այս մոտիւներով, սակայն, երեք Արեւների դիցարանութիւնը չի սպառնում: Հնագոյն շատ ժողովուրդների մշակութիւններում Արեւի շահրուածն պատճառը ոչ միայն նրա աւազ եղբայրներն են կամ երկրային հերոսը, այլեւ հայր եւ որդի Արեւների հակամարտութիւնը: Այս դէպքում պայքարը շատ աւելի դրամատիկ է: Ունի հարուստ զաղափարաբանական յինք, որից յետագայ ժամանակներում ազդուել է ոչ միայն քրիստոնէութիւնը, այլեւ իսլամը: Սակայն, սա արդէն խօսակցութեան այլ ընդգրկուն թեմա է, որը մէկ յօդուածի շրջանակներում հնարաւոր չէ սպասել:

ՄԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

⁷ Պատմութեան Համեմատն Եւ Աշխարհն. Պատմութեան Յազաք Փահլույ Քաղաւորին, աշխատասիրութեամբ Արմենուհի Սրապեանի, Երեւան, 1983, էջ 100-142:

⁸ Նոյն, էջ 13-14:

⁹ Տե՛ս՝ Գաղիկ Մարտոյեան, Վանկան Եւ Աղջկայ Զրոյցի Այլաբանական Որոշ Խորհրդանիշներ Հայ Միջնադարեան Եկեղեցական-Մեկնական Գրականութեան Լաթի Ներքոյ, (Երևանը անտիպ է):

¹ Պատմիկն Հասն Մանգան, էջ 95:

² Այս դատիս, որ կրատուին է համարուի, սա է գալիս անձրեաց եւ անօրից քա-
րատանաց, Աշոտ Արքունան, Անանիոս Երեմիայոս Մասնագրութիւնը, Վա-
ղարս Կենդանատեսակաց, Երևան, ՀՍՍՌ Մասնագրարտի Հրատարակչութիւն,
1944, էջ 325-326:

³ Յարութիւն Մարտիրոսան, Գիտութիւնը Սկսում է Եղբակարտում, Երևան, ՎՍԿ-
տական Գրոց Հրատարակչութիւն, 1978, էջ 81:

⁴ Պատմիկն Հասն Մանգան, էջ 96:

⁵ Տն' Գաղիկ Մարտիրոս, Օճակչաց Արեւի Դիցարանութիւնը, Երևան, «Զանգակ-Պ»
Հրատարակչութիւն, 2003, էջ 17-45:

⁶ Այս ճեղքաբերի մասին տն' Գաղիկ Մարտիրոս, «Երուանդ Լալայանի Արա Գնդ-
րիկը Փողոցական Հեղինակներում», Հայաստան Հայագիտական Հանգէս, հտ. Ի.,
2000, էջ 119-137:

⁷ Հայ Փողոցական Հեղինակներ, Հ. II, խմբ. Կ. Ա. Մննդ-Օւանձանեան, Երևան, Հայ-
ՍՍՌ ԳԱ Հրատարակչութիւն, 1999, էջ 23:

⁸ Ետն' Հատը VII, խմբ. Ս. Գ. Արքունան, Երևան, Հայ-ՍՍՀ ԳԱ Հրատարակչու-
թիւն, 1979, էջ 985:

⁹ Ետն' Հատը I, խմբ. Ա. Ղանալանեան, Երևան, Հայ-ՍՍՌ ԳԱ Հրատարակչութիւն,
1999, էջ 21:

¹⁰ Ետն, էջ 40:

¹¹ Ետն' Հատը V, խմբ. Ս. Գ. Արքունան, Երևան, Հայ-ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն,
1998, էջ 415:

¹² Սիրոյ Հորն Սիրոյ Մարտիրոս Պատմիկն Հայոց, Քիթիլի, 1910, էջ 106:

¹³ Մանուկ Արեղեան, Երեմի, Հատը Ա., խմբ. Ա. Ղանալանեան, Երևան, Հայ-ՍՍՀ ԳԱ
Հրատարակչութիւն, 1998, էջ 384-385:

¹⁴ Մասունքի Գաղթ. Հայ Պատմիկներ. Հաւածքին եւ Հրատարակչութեան պատրաստեցին
Գրիգոր եւ Վահագն Գրիգորեանները, Երևան, 1977, էջ 333-340. Յայտն մեզ էի հանդի-
պել քաղաքականութեան որեւէ փորձ Սեդրակա՛յ Արեղեանի երկերում՝ այն պարզապէս
հաղթի կապակցութեամբ, թէ ինչու ճեղքաբերը պահպանել են եղբայրների ետեակ
թուականների մասին յուշը, իսկ հայկական է պատճառ: Մեծապէս կարելի է միայն, որ
ճեղքաբերն իրենց մէջ աւելի խոր ճութիւն ունեցող զիջարանական նիւթ են պարու-
նակում, քան էլ պարզ ճութեւ պիտի անճեղքի է, որ ի զին Սահապարի եւ Բազդա-
սարի, կոստ է մուտք գործել երկուորեանների առաջնորդը Մինչդեռ ճեղքաբերում
երևան են գալիս առաջ, միմեկ եւ կրտսեր եղբայրները, որոնց երկուորեակ լինելու մա-
սին ուղղակիորէն վիշապիւն լիար Ընդ որում, հարկ է նկատել նաեւ, որ Սահապարն
էլ է կարտում ոչ թէ կրտսեր, այլ առաջ եղբայրն է: Բանահիւսական այս հակասութիւն-
ների լուծումը փնտռելու ճանապարհին անգուրու էլ խոստում, որ կան Վիշապ խնձորը
եւ Վիշապիցը վերնադերով, երեք եղբայրներին վերաբերող հայկական երկու ճեղքաբ
եւս (Հայաստան Փողոցական Հեղինակներ, Հ. VIII, Հատը րեւազրի պատրաստումը,
Կախարհ, Երևան, Հայ-ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1977, էջ 487, 508), որոն-
ցում երբորը եղբայրն ահնայաբերն էլ պոսի Բազդասարի յատկանիշներն է կրում, ի-
րու ֆիզիկապէս պակասաւոր ծնունդ: Առաջին ճեղքաբում նրա ահանիւն, թեւի, ոտքի
մէկը լիար Երկրորդում մի քաղցը (կողմը): Հանդիսայտ է, որ առաջին կրտսեր եղբայր
Բազդասարն է Մովսէսի խման կէս քուռ լրի պատճառով էլ պատում վրա ծուռ ծնունդ:
Վիշապ խնձորը ճեղքաբում թէն երեք եղբայրների մայրն իր գաւակներն աշխարհ է

բերում ոչ թէ շուր խելով, այլ խնձոր ուտելով, սակայն այստեղ էլ ակներևաբար անարատ չլինա՞նք փաստի ենք առնչում: Երբորդ խնձորը մաշող կիսատ է կերել, այդ պատճառով էլ երբորդ որդին պակասուր է մտուել: Վերջանդը Հեքիաթում առաջ երազյանը կրատերին հարն են դրում: Ես գնում է երկնքով թռչող Մովսիսը աղիկայ ետեկց եւ ազատում նրան վրչապի գերութիւնից: Այս զուգադրումները հիմք են տալիս չքայտուել, որ էպոսի նախնական ինչ-որ պատումում այնուամենայնիւ լիլուած է եղել երկուսուրեակ երազյանի ետեակ թուարանակը, սակայն այդ պատումը մեզ չի հասնի: Մինչեւ ինչ ժամանակ միայն է, որ ամենականը ոչ թէ էպոսի երկու կամ Հեքիաթների երեք երազյանների թուարանակն է, այլ նրանց վերագրուող առասպելական, Հեքիաթային մտախնդրի նոյնութիւնը:

²³ Edward Taylor, *Pervobitnaia kulturna* (Նախնազարեան Մշակույթ), Մոսկուա, 1980, էջ 106-107, 288.

²⁴ Մարգար Եսարութիւնեան, *Հայ ժողովրդական Հանրութիւնը*, Հայկ. ՍՍՏ Գիտութիւնների Ազգային Միություն, Երևան, 1966, էջ 71.

²⁵ Անրէն Ենրճալի, *Բազմաբան*, Վենետիկ, 1830, էջ 664.

²⁶ Vladimir N. Toporov, "Ob otrazhenii odnogo indoevropskogo mifa v drevnearmianskoi traditsii" *Պատմա-Քրոնոսոգրաֆիան Հանրագիտ.* 3, 1997, էջ 97-106.

²⁷ Աբեղեան, *Հատոր Ա.*, էջ 76.

²⁸ Issledovaniia i stati N. O. Emina po arмянskoi mifologii, arkhologii i istorii literatury (za 1858-1884 gg.) (Մ. Յ. Էմինի Ուսումնասիրութիւնները Եւ Յազուածները Հայոց Դիցարանութեան, Հնարանութեան Եւ Գրականութեան Պատմութեան Վերաբերեալ (1858-1884թթ.)), Մոսկուա, 1888, էջ 81.

²⁹ Տրետեանի անուան հիմքը ուտելին տնիւ-եկրորդը թուականն է, իսկ օձ մասնիկն ազգանունական վերջաւորութիւն է: Արշալուի ազգանուն Կանգիպում է նաեւ մեր օրերում (Vodovichը Կարանուն է): Ինչ վերաբերում է Կրեյնիկ եւ Vodovichի միջեւ եղած կապին, ապա դա զուտ անուանական է. մէկը ցույց է տալիս Հերոսի երբորդը լինելու, միւսը՝ իրից սերած լինելու (տուարենն voda-Վուրս բառից) Կանգամանքը Արշալուին է նաեւ Հեքիաթական Տրետան, որը Ռիզվեդարում կապուած է իրերի հետ, իսկ անուանը ստուգարանում է հին Հեզկիերէն տնիւ-եկրորդը արժատով:

³⁰ Toporov, նոյն.

³¹ Narodnie russkie stazki A. N. Afanaseva (Ա. Ն. Աֆանասիւի Ռուսական Ժողովրդական Հեքիաթները), 1, Մոսկուա, 1966, էջ 241.

³² Grazinskie narodnie stazki. sost. I per. N. I. Dolidae (Վրացական Ժողովրդական Հեքիաթներ, կազմեց եւ թարգմանեց՝ Ն. Ի. Դոլիձե), Թբիլիսի, 1968, էջ 15.

³³ Հին Արեւելքի Փոփոխ, կազմեց եւ թարգմանեց Հ. Էդուարդ, Երևանի Համալսարանի Հրատարակչութիւն, Երևան, 1983, էջ 143.

³⁴ Semiucl Kramer, *Istoria nachinacetsia v Shumere* (Պատմութիւնը Սկսում է Եւրոպայում), Մոսկուա, 1901, էջ 150.

³⁵ Meri Boys [Mary Boyce], *Zoroastriitsi. Verovaniia i obichai* (Հրադաշտականներ. Հաւատալիքներ Եւ Սովորույթներ), Մոսկուա, 1968, էջ 28.

³⁶ Apulei, *Apologia, metamorfozi, floridi* (Ապուլուզիա, Փոխակերպումներ, Յլորիդներ), Մոսկուա, 1900, էջ 188-189.

³⁷ Հայ ժողովրդական Հեքիաթներ, Հատոր 1, էջ 30.

³⁸ Աբեղեան, *Յրբեր*, Հատոր Է., կազմեց եւ թարգմանեց Մ. Եսարութիւնեան, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1976, էջ 41.

- ³⁶ Գարեգին Արուսեանեանց, *Սրբեր, հատոր 1, խմբ. Ս. Բ. Յարութիւնեան, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1976, էջ 149-150.*
- ³⁷ *Նոյն, էջ 149.*
- ³⁸ Ա. Գ., *Արեւելեան Հայ Բողոքական Հաւատքին Մէջ, Հանգիս Աւետարան, №9 տարի, Թի. 10-11, Հոկտ.-Նոյեմբեր, 1920, էջ 043-044.*
- ³⁹ *Mifi narodov mira (Աշխարհի Բողոքականների Առասպելներ), Կ. Ս, Մոսկուա, 1923, էջ 623.*
- ⁴⁰ Ա. Գ., էջ 048.
- ⁴¹ Veronika Afanasieva, *Gilgamesh i Enkidu. Epiheskie obrazi v iskusstve (Գիլգամէշ Եւ. էն-կիդու. էպիկական կերպարներն Արուստում), Մոսկուա, 1979, էջ 102, 106.*
- ⁴² *Նոյն, էջ 97-98.*
- ⁴³ *Նոյն, էջ 108.*
- ⁴⁴ *Նոյն, էջ 98.*
- ⁴⁵ *Նոյն, էջ 82.*
- ⁴⁶ *Mifi narodov. Կ. Ս, էջ 871.*
- ⁴⁷ Vladimir Propp, "Motiv chudsnogo rozhdeniia." *Folklor i deistvitel'nost' (Հրաշքի Մենդի Մտորը, Բանահաւատքին Եւ. Բրահմանդիւն), Մոսկուա, 1976, էջ 216-217.*
- ⁴⁸ Հայր Դեանդ Ալիւան, *Հին Հաւատք կամ Հիմնարկական Կրօնը Հայոց, Վենետիկ, 1910, էջ 103.*
- ⁴⁹ *Արքայադաս Հանգիս, III տարի, դիրք 9-.*
- ⁵⁰ *Նոյն, II տարի, դիրք Բ., 1897, էջ 218.*
- ⁵¹ Ա. Գ., *Նոյն, Թի. 12, Դեկտեմբեր, №9 տարի, 1920, էջ 768.*
- ⁵² Սարգիս Յարութիւնեան, *Անիտըն Եւ. Օրհնանքի Ժանրը Հայ Բանահաւատքին Մէջ, Հայկական ՍՍՀ ԳԱ, Երևան, 1976, էջ 189.*
- ⁵³ Աննա Արքիեան, *«Քաթախ Մանուկ» Պատմական Որոշ Արտագրութիւնը Հայկական Երկրում, տն' Քաթախ Մանուկ. Նատալիանի Երկեր, Երևան, 2001, էջ 45-48.*
- ⁵⁴ *Տն' Երկեր, Թի. 10.*
- ⁵⁵ Johan Puhvel, *Comparative Mythology, Baltimore and London, 1989, էջ 89-102.*
- ⁵⁶ Ասատուր Մնացականեան, *«Քաթախ Մանուկ» Յուշարձանների Մասին Պատմա-Բանասիրական Հանգիս, 2, 1976, էջ 190-191, 196, 198.*
- ⁵⁷ Մանուկ Մկրտչարեան, *Նկարագրական Ուղեւորութիւն Ի Հայաստանի Գաւառ Արեւելեան Տանգաւանի, Մաս Բ., Կ. Պոլիս 1886, էջ 46.*
- ⁵⁸ Արեւիկ Իրին Ժակովնա (արիւթ թերոյ) *Հերոսի յատկանիշների մասին տն' սրե-նակ' Vischeslav V. Ivanov, "K typologii drevneblizhnovostochnikh gimnov solntsu", Sbornik statei po vtorichnim modeliruiushchim sistemam (Հնագոյն Մերձար Արեւելքի Արեւիկ Նուիրուան Օրհնանքների Տիպոլոգիաների Մասին, Երկրորդական Մոդել-Յարմարական Համակարգերի Արտարեւել Յարուանների Ժանրերում), Տարուա, 1973, էջ 48-49.*
- ⁵⁹ Մերոյ Արքեպիսկոպոս Աշեան, *Քաթախ Մանուկ. Նատալիանի Երկեր, էջ 9.*
- ⁶⁰ Հրազդար Յակոբեան, *«Քաթախ Մանուկներին Պատկերադրութիւնը Հին Հայաստանում, Քաթախ Մանուկ. Նատալիանի Երկեր, էջ 93-94.*
- ⁶¹ Աշեան, էջ 10-13, 16-18.
- ⁶² Թամար Գեորգեան, *«Քաթախի Անտարանի Գործառութիւնը Պարսկաստանի Աւանդական Կենցաղում, Հայոց Արքեպիսկոպոսի Միջնադարից, Երևան, 2001, էջ 411-413.*

- ⁶¹ Ասատուր Մնացականեան, *Հարձականք Զարգացումն*, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1965, էջ 236.
- ⁶² Թարուհիներն, *Անճրիք Եւ Օրհնանքի Ժանդը*, էջ 224, 250, 267.
- ⁶³ Արգաստրական Հանդէս, Վարդի, զինք Զ., Թիֆլիս, 1900, էջ 33.
- ⁶⁴ Ստեփան Մախր, Հատար Գ., խմբ. Ա. Տ. Ղանալեան, Ա. Մ. Նազիկեան, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատարակչութիւն, 1990, էջ 349.
- ⁶⁵ Սրուանեանց, էջ 76-77.
- ⁶⁶ Կիլիկեան Արգաստրական Ժողովածու, Հո. Ա. Մուկիւմ-Աւերանդրազը, 1901, էջ 203.
- ⁶⁷ Միսնի Հմայակեան, *Հանի Բարաստրութեան Փետտան Կրօնը*, Հայաստանի ԳԱ Հրատարակչութիւն, Երևան, 1990, էջ 45, ազ. ճ, 24, նկ. 1, 2.
- ⁶⁸ Փաստութիւն Տարեայ Զոր Բարգաճանեաց Զինոր Ասորի, երկրորդ տպագրութիւն, Վենետիկ, 1899, էջ 32-37.
- ⁶⁹ Արամ Ղանալեան, *Աւանդադատութիւն*, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1990, էջ 5-7.
- ⁷⁰ Մամիկոնեան, էջ 218-219, 294.
- ⁷¹ Propp, էջ 218-219.
- ⁷² Արեղեան, Հատար Է., էջ 66.
- ⁷³ Ծ. Լալայեան, *Օրինք*, Հատար II, Երևան, էջ 261.
- ⁷⁴ Bois, էջ 38.
- ⁷⁵ Խմբ. Խանդազեան, *Ընտր Չարանի*, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1970, էջ 36-47.
- ⁷⁶ Արեղեան, *Օրինք*, Հատար Գ., խմբ. Խմբ. Խանդազեան, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1970, էջ 368.
- ⁷⁷ Eduard Temkin, Vladimir Erman, *Mifi Drevnei Indii* (Հին Հնդկաստանի Առասպելները), Մոսկուա, 1982, էջ 29-30.
- ⁷⁸ Rigveda. Ebronnie gimni. (Ռիգվեդա. Հնարուան Օրհներգեր), *Թարգմանութիւնը, Զանոթաբարութիւնները եւ ներածական յոդուանք Տ. Եւ. Սիլգարենիովաժի*, Մոսկուա, 1973, էջ 106-106; *Mifi narodov mira*, Ը. I, Մոսկուա, 1981, էջ 189-190.
- ⁷⁹ Rigveda, էջ 189-190.
- ⁸⁰ Aleksandr Zolotarev, *Rodovi stroi i pervobitnaia mifologija* (Յնդական Կարգը Եւ Նախնայարեան Դիցարանութիւնը), Մոսկուա, 1984, էջ 260-261.
- ⁸¹ Dark Bodde, "Mifi Drevnego Kitais", *Mifologii Drevnego mira* (Հին Զինաստանի Դիցարանութիւնը, Հին Աշխարհի Դիցարանութիւն), Մոսկուա, 1977, էջ 390.

THE MYTHOLOGY OF THREE BROTHERS OR THREE SUNS IN
ARMENIAN AND FOREIGN CULTURE
(Summary)

GAGIK MARTOYAN

The legendary nature of the fairy tale of three brothers is known to exist internationally. However, no one has noticed and attempted to trace back the mythical references of the sun.

Comparative study of these fairy tales brings us to the conclusion that they carry to us a remote legend of three suns. These three suns have been mythically reified as the three positions of the sun throughout the day: in the morning, at noon, and in the afternoon. Furthermore, these fairy tales describe the death of the sun and its entry into the post-mortal world at sunset.

The youngest brother is the sunset sun, whom the elder brothers leave in the well (the road to the post-mortal world). The youngest brother finds himself in the Dark World, kills dragons (including the one that has terrorized the town, blocked the spring, asking for a female ransom every time he has to let some water go). The hero liberates the town from the dragon and arrives in the Light World on the wings of the eagle.

In Russian fairy tales the names given to the three brothers are linked to the light of the morning, to the light at noon and to that of afternoon or night (that of the sun-moon). In the Georgian "Ivan Zaria" fairy tale, perhaps influenced by the Russian, the three brothers not only bear these names (corresponding to the three locations of the sun) but they live in the sky too. In the Armenian fairy tale, "The Tale of Alo-Dino or Hazaran Belbool", nature itself warns that Alo-Tino "came out of its mother", similar to the way people describe the dawn, saying that the sun "came out of its mother".

An essential part of the three brothers' legend has been reflected by Medieval Armenian ecclesiastical exegetical literature. In the tale of the "manoug (=child, or young man) and the girl", the youngest brother is personified in the fair, decent and Christian character of the *manoug*. *Manoug* is described with solar characteristics, though he reminds us of the pre-Christian just-sun.

The sun-hero is hidden in the Armenian ritual worshipping of *tookh manougs*. Characteristics of the *tookh manougs* correspond to those of the third brother.

The mythical belief of the three suns was spread not only among the Indo-Europeans, but among the Mongols and the races of the Amour Valley. It has been preserved basically as three brothers in mystery tales, which most probably have an Indo-European origin.